



ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ  
 Հատոր 2, համար 2, 2008թ.



www.ysmu.am

**ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՄԱՆ  
 ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ավետիսյան Լ. Ռ.

Երևանի Մ. Զերացու անվ. պետ. բժշկական համալսարան, Երևան, Հայաստան

Հայտնի է, որ դպրոցականների և ուսանողների առողջության ձևավորման ընթացքում (հատկապես դպրոցականների), բացի բազմաթիվ կենսասոցիալական գործոններից, մեծ դերակատարում ունեն նաև ուսումնական գործընթացն ու ուսումնական միջավայրը: Այդ պատճառով, այսօր Հայաստանի Հանրապետության կրթության համակարգի բազմաթիվ փոփոխություններ, ենթադրվում են ուսումնական գործոնների կարգավորման հիմնական հարցերի վերանայում, միաժամանակ դրանց գիտական հիմնավորումը:

Աշխատանքների նպատակն է՝ ուսումնասիրել հետխորհրդային շրջանում ՀՀ դպրոցներում և ԲՈՒՀ-երում նոր ռեժիմով և ուսումնական ծրագրերով սովորողների առողջական վիճակը և հիգենիկ մշակման ցուցումները՝ ուղղված առողջության պահպանմանը:

Երևանի 14 դպրոցների 5,5-7 տարիքի 638 առաջին դասարանցիների և ինտենսիվ ռեժիմով աշխատող նոր տիպի դպրոցների 863 սովորողների, միաժամանակ ԵրՊԲՀ-ի 1266 ուսանողների մոտ անցկացվել է հոգեֆիզիոլոգիական ստատուսի և առողջության վիճակի հետազոտություն:

Անբարենպաստ փոփոխություններ է գրանցվել սովորողների առողջական վիճակում, պայմանավորված ոչ միայն բազմաթիվ կենսասոցիալական գործոններով, նաև՝ հոգեֆիզիոլոգիական և միջավայրի գործոններով պայմանավորվող ուսումնական գործընթացով:

Հայտնաբերված հիգենիկ նորմերի խախտումները, որոնք կցված են նշանակված ուսումնական ռեժիմին, պատճառ են հանդիսացել անբարենպաստ փոփոխությունների՝ ինչպես սովորողների մտավոր աշխատունակության և ուսումնական ակտիվության, այնպես էլ նրանց առողջական վիճակի համար:

Հիմնավորված են գիտական մշակված հիգենիկ տեխնոլոգիայի ներդրման արդյունքները:

Առաջարկվում է, համատեղ աշխատանքով և համապատասխան մարմիններով, դպրոցներում և ԲՈՒՀ-երում շարունակել բազմակողմանի հետազոտություններ՝ կանխարգելիչ համալիր մշակումների միջոցառումների համար, ուղղված սովորողների առողջության պահպանմանը: